

## ՔԱՐՈՉԻՈՍԱՎԿԱՆ

**Տ. ԶԱԲԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**  
(14 փետրվարի, 2014 թ.)

Յանուն Նոր և Որդոյ և Նոգոյն Սրբոյ. ամեն:

«Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար,  
և այդ մարդն արդար ու աստվածավախ էր  
և ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը,  
և Ս. Նոգին էր նրա մեջ»  
(Դուկ. Բ. 29):

Սիրելի բարեպաշտ հավաքացյալներ,

Այսօր Նայասարանյայց Առաքելական Եկեղեցին մեծ շուքով և հանդիսավորությամբ նշում է Տյառնընդառաջը՝ քառասնորյա Նիսուս Բրիսպոսի փաճարին ընծայվելու հիշատակը, երբ աստվածախոս Դուկաս ավերարանչի միջոցով ես մեկ անգամ մտնեցի Կրեդափոխում ենք երկու հազար փարի առաջ, հոգևոր աչքերով և անտեսանելի ներկայությամբ մասնակիցը դառնում պարմական այդ իրադարձության, որն այնքան խորհրդավոր է և լուսավոր: Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Ս. Նակորոս Տյառնընդորը կողմից կարգված այս փոքր հրավեր է մեզանից յուրաքանչյուրին՝ Տիրոջն ընդառաջ գնալու, մեր հավաքքի մեջ գործանալու, անսահման հույսի և սիրո մեջ ապրելու, քանզի հաղթանակած Աստված մեզ հեր է: Այն նաև պարեհ առիթ է մեզ համար՝ մտորելու, թե որքան մոտ ենք Աստծուն, որքան փրկվում ենք մեր կյանքից ներս:

Սիրելիներ, շատ փոքրիկ նման Տյառնընդառաջն էլ ունի սուրբգրային իր հիմնավորումը, որը մեզ օգնում է առավել խորությամբ հասկանալու և ներթափանցելու գեղեցիկ այս փոքր խորհրդի մեջ:

Իսրայելացիները մի սովորություն ունեին, երբ նրանց արու գավակը քառասուն օրական էր դառնում, ծնողները նրան նվիրաբերում էին փաճարին: Մակայն սա մեկ այլ խորհուրդ էր ունեց. ծնողաբերությունից հետո կանայք քառասուն օր անմաքոր էին համարվում, ուստի պետք է փաճար գնային և հարուկ ծեսով մաքրվեին: Իսկ ընծայելու չափը կախված էր փոքր ընդհանրի ընկերային վիճակից: Ուստի հրեական սովորության համաձայն՝ արաղձագործ Նովսեփն ու Ս. Կույս Մարիամը, սրբագործման քառասուն օրերից հետո, մանուկ Նիսուսին Երուսաղեմ են փրկում՝ փաճարին ընծայելու համար, ինչպես որ Օրենքն էր պահանջում: Ըստ ավանդության՝ երբ նրանք մտնում էին փաճարին, արդեն մթնել էր, և փաճարի արևելյան դուռը, որը վաղուց ի վեր փակ էր, Տիրոջ

մտքերն աղյուսակապես բացվում է, որով և կատարվում է Եզեկիելի մարգարեությունը. «Այդ դուրը փակ է մնալու և չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտքի այդ փակումը» (Եզեկ, ԽԴ. 2): Դռների բացվելու ժամանակ մեծ դղրդյուն է լինում քաղաքում. բնակիչները դուրս են ելնում իրենց փոքրից, քանի որ մութ էր, վառվող ջահերով և ճրագներով փակված՝ Տիրոջ ընդառաջ են գալիս, որպեսզի փրկվեն փակված կողմից: Այս պարճառով է, որ երեկ՝ մեր եկեղեցիներում, երեկոյան փոսի նախապոնակը կատարեցինք՝ մեր ձեռքերին ունենալով վառվող մոմեր, և Ս. խորաններից վառված ճրագը փուն փարանք, որպեսզի նույն այդ լույսով լուսավորենք և ջերմացնենք նաև ընդհանրական մեր հարկերը:

Աստվածաշունչը պարմում է, որ այդ ժամանակ Երուսաղեմում Սիմեոն անունով արդար և աստվածավախ մի մարդ կար, որն ակնկալում էր Իսրայելի միսիթարությունը: Ս. Գիրքը ոչինչ չի ասում նրա փառքի, ծնողների կամ ազգապոռնի մասին, այլ պարզապես նշում է, որ նա «արդար» և «աստվածավախ» մարդ էր՝ շեշտելով Սիմեոնի առաքիլությունները: Եկեղեցու Նայերը Սիմեոնին նկարագրելիս օգտագործում են «աստվածագայաց» մակդիրը, քանզի նա կրեց, գրկեց մանուկ Նիսիմի: Ուստի բազում ավանդություններ են սրբազանվել Եկեղեցու մեջ նրա մասին, որոնցից մեկի համաձայն՝ Սիմեոն ծերունին այն յոթնասուներկու թարգմանիչներից էր, ովքեր Եզեկյան Պրոֆետա թագավորի հրամանով Նին Կարակարանի գրքերը երաչյերենից հունարեն թարգմանեցին: Երանելի Սիմեոն այդ ժամանակ շար երիտասարդ էր: Եր թարգմանության ժամանակ, երբ նա հանդիպում է Եսայի մարգարեի այն խոսքին, թե՛ «Ահա Կույսը պիտի հղիանա ու որդի ծնի և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Ես. Է. 14), երանի է փալիս այն մարդկանց, ովքեր ակնապես կլինեն այս մարգարեության կատարմանն ու իրենց սեփական աչքերով կրեսնեն հանուր մարդկության Փրկչին: Եր ինչպես Ավերարանիչն է վկայում. «Ս. Նոգուց հրամայված էր իրեն մահ չտեսնել, մինչև որ փեսեր Տիրոջ Օծյալին» (Ղուկ. Բ. 26): Երբ մանուկ Փրկչին փակվում են բերում, Սիմեոն ծերունին Ս. Նոգու առաջնորդությամբ նույնպես փակվում է գալիս, գրկում մանկանը, գոհություն հայտնում Ամենակալին՝ ասելով. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև աչքերս փրկան են քո փրկությունը, որ պարտապարհի բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայրությունից հետո...» (Ղուկ. Բ. 29-31): Փաստորեն, Ս. Նոգու շնորհներով զարդարված այս ծերունին իր շուրթերով բարբառում էր աշխարհի փրկության ավերիսը: Նա իր դողդոջուն ձեռքերով իր գիրկն էր առել երկնքի ու երկրի Արարչին, հզոր Աստծուն, որ մարմնացավ ու ծնվեց Ս. Կույսից մարդկության, ասել է թե, մեզանից յուրաքանչյուրի փրկության համար, նրան, որի ծննդյամբ մարդկությունն ազատագրվեց մահվան հավերժական դատապարտումից, նրան, ով իբրև արդարության Արեգակ, երեսաց մարդկանց մեջ՝ լուսավորելով մեր հոգիներն ու սրտերը: Այս ծերունագարդ այրն ասես խորհրդանշում է հեթանոսների դարձն ու քրիստոնյաներիս աստվածային լույսի ընդունումը: Այդ պարճառով է, որ Տյառնընդառաջ անվանում են նաև Լույսի փուն, քանզի մեկ անգամ նա փաստվում և շեշտվում է Քրիստոս Աստծո լույս լինելը, որովհետև առանց աստվածային և կենդանաբար Լույսի ամեն ինչ խավարի մեջ է, իսկ քրիստոնյաներիս համար՝ առավել նա, քանզի առանց Տիրոջ լույսի մեր հոգևոր, բնականային և հասարակական կյանքը չի կարող գոյություն ունենալ: Նովհաննես աստվածաբան ավերարանիչն ասում է. «Աստված լույս է, և նրա մեջ խավար չկա» (Ա.

Նովի. Ա. 5): Ուրեմն՝ եկե՛ք ձգարենք հենց այդ Լույսին և աշխարհե՛նք այն մեր մեջ ունենալ, որպեսզի ավելի հաստատուն լինեն մեր քայլերն այս կյանքում:

Ահավասիկ առաջին հայացքից շար պարզ ու հասկանալի մի պարամոթյուն է թվում Տիրոջ ընծայման ավերարանական այս դրվագը, սակայն իրականության մեջ այնքան խորախորհուրդ է ու իմաստալից: Աննկարագրելի ու անպարմելի է Սիմեոն ծերունու երկարամյա սպասումն ու Նիսուսին իր գիրկն առնելու նրա անկողնապրելի ուրախությունը: Մի բերկրանք և ցնծություն, որ յուրաքանչյուրս ապրում և ճաշակում ենք դրա քաղցրությունը, երբ բախար ենք ունենում հավելու Տիրոջը, էլ ավելի մերձենալու նրան՝ մեր երկրային կյանքն իմաստավորելով միայն ու միայն նրանով: Ինչքան երկար է սպասել ծերունագարդ Սիմեոնը խորհրդավոր այս պահին, միայն Աստված գիտե: Ինչքան է մարածել, աղոթել ու Աստծո նորմաձայնությունը դիմել, կրկին միայն Բարձրալիկն է հայտնի: Սակայն մի բան հստակ է ու անվիճելի. նա երբեք չի ընկճվել և հուսահատվել, այլ պարզապես առանց երկմտելու անանց համբերությամբ և առ Աստված ունեցած իր աներեր հավատով յուր սպասել է այդ երանելի օրվան և Բարձրալից իրավամբ արժանացել մեծագույն շնորհի, քանզի Աստծուն փեսները նրա համար դարձել էր կյանքի նպատակ: Ուրեմն, հազար երանի՛ նրան, որի կյանքի նպատակն Աստծուն փեսներն ու իր սրբունք ընդունելն է:

Անարարակույս բառերն անգոր են նկարագրելու համար նրա ուրախությունը. չէ՞ որ Սիմեոնն իր դողողուն ձեռքերով գրկել էր նրան, ով արարիչն է ամեն ինչի, ով ինչպես իր, այնպես էլ ողջ մարդկության համար կամավորապես հանձն էր առնելու մահը, սակայն մահը նրան չէր իշխելու, քանզի Տերը հաղթելու էր նաև մահվանը՝ երբորդ օրը մեռելվեքից հարություն առնելով: Իր ձեռքն էր առել նրան, ով իր Աստվածն է, Փրկիչը, ամենապիլեղին ու պաշտելին, որի համար ինքը՝ Սիմեոնը, պարբասար է ամեն ինչի: Եթե նայենք մեր շուրջն ու մի պահ թափանցենք մեր հոգու խորքերը, ապա կտեսնենք, որ մենք էլ մեր առարնին կյանքում յուրովի ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի ենք սպասում: Ահա այսպես է Սիմեոն ծերունուն ընկալելու և հասկանալու բանալին. նա Տիրոջն էր սպասում անպրպունջ ու հավատով լի. մենք ո՛րն կամ ինչի՞ ենք սպասում: Նա Տիրոջ փրկագործության մասին էր մարգարեանում, իսկ մե՛նք: Ահա հարցեր, որոնց պատասխաններն այնքան կարևոր են մեզ համար և մտքերու առիթ են փայլա:

Ուրախության պահերին բազմիցս լսել ենք մեր մեծերի բարեմաղթանքը. «Սիմեոն ծերունի լինես», այսինքն՝ երկար ապրես: Բայց հազար երանի՛ նրան, ով ոչ միայն կարժանանա Սիմեոնի երկարակեցությանը, այլ նաև նրա նման իր սրբունք կրողունի հավատքի Չորագլխին, այս աշխարհում կղաճա Փրկչի ճշմարիտ աշակերտը և հնարավորություն կունենա Տիրոջն ընդառաջ ելնելու և նրան գրկելու: Ներկաբար Տյառնընդառաջի խորհուրդը նաև Աստծուն սպասելու, նրան մերձենալու և նրա ներկայությունը զգալու մեջ է:

Ուստի, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, անվարան, առանց դույզն-ինչ փարսավելու, գնանք Տիրոջ կենսապուր և անմար յույսին ընդառաջ և ամեն ժամ աղոթենք, որ Աստված մեզ էլ գթա և արժանացնի այն անհուն խնդությանն ու բերկրանքին, որն ապրեց Սիմեոն ծերունին Մանկանը գրկելու ժամանակ:

Տիրոջ սերն ու անսահման ողորմությունն ամենքիս հետ լինեն. ամեն: